

**ՀՀ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀՀ ԱՎԾ-ԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ
ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՓԱՍՏԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾԱԽՍԵՐ**

Ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման ծրագրերի, 2013թ.-ի համար հաստատված «Բյուջետային հիմնարկի պահպանման ծախսերի» տարեկան ճշտված նախահաշիվների նկատմամբ փաստացի հատկացվել են.

- «Պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» (01.03.02.01) ծրագրով սահմանված ծախսերի ֆինանսավորումն առ 01.01.2014թ. կազմել է 638 690.48 հազ. դրամ՝ նախատեսված 649 428.90 հազ. դրամի փոխարեն կամ ներկայացված հայտերի հիման վրա փաստացի ֆինանսավորումը կատարվել է 98.3%-ով (2012թ.-ին՝ 98.7%): 2013թ.-ին դրամարկղային ծախսը 2012թ. համեմատությամբ աճել է 15 774.49 հազ. դրամով, որը 2012թ.-ին կազմել էր 619 366.67 հազ. դրամ:
- «Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում» (01.03.02.02) ծրագրով սահմանված ծախսերի ֆինանսավորումն առ 01.01.2014թ. կազմել է 342 991.04 հազ. դրամ՝ նախատեսված 352 008.20 հազ. դրամի փոխարեն կամ ներկայացված հայտերի հիման վրա փաստացի ֆինանսավորումը կատարվել է 97.4%-ով (2012թ.-ին՝ 96.4%): 2013թ.-ին դրամարկղային ծախսը 2012թ. համեմատությամբ աճել է 54 427.09 հազ. դրամով, որը 2012թ.-ին կազմել էր 286 866.49 հազ. դրամ:
- «2011թ. մարդահամարի նախապատրաստական աշխատանքների կազմակերպում» (01.03.02.04) ծրագրով սահմանված ծախսերի ֆինանսավորումն առ 01.01.2014թ. կազմել է 37 209.90 հազ. դրամ՝ նախատեսված 39 144.80 հազ. դրամի փոխարեն կամ ներկայացված հայտերի հիման վրա փաստացի ֆինանսավորումը կատարվել է 95%-ով (2012թ.-ին՝ 99.8%): 2013թ.-ին դրամարկղային ծախսը 2012թ. համեմատությամբ նվազել է 33 676.68 հազ. դրամով, որը 2012թ.-ին կազմել էր 70 885.67 հազ. դրամ՝ 2011թ. մարդահամարի աշխատանքների կրճատման և ծրագրի ավարտով պայմանավորված:
- «ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ. «ՀՀ 2014թ. գյուղատնտեսության համատարած հաշվառման նախապատրաստական աշխատանքների կազմակերպում», «Անհատական բնակելի շենքերի ընտրանքային հետազոտություն», «Սերվերի ձեռքբերում» (11.01.01.01) ծրագրով սահմանված ծախսերի ֆինանսավորումն առ 01.01.2014թ. կազմել է 79 754.56 հազ. դրամ՝ նախատեսված 99 363.0 հազ. դրամի փոխարեն կամ ներկայացված հայտերի հիման վրա փաստացի ֆինանսավորումը կատարվել է 80.26%-ով: 2013թ.-ին դրամարկղային ծախսը կազմել է 77 976.89 հազ. դրամ:
- Միջազգային համագործակցության շրջանակում իրականացվող ծրագրերի մասով - «Միջազգային համադրումներ» ծրագրի շրջանակում մուտքը կազմել է 1 938.50 հազ. դրամ (մնացորդ առ 01.01.2013թ.՝ 0.05 հազ.դրամ), որից դրամարկղային ծախսը կազմել է 1 938.50 հազ. դրամ: «Մարդահամար 2011» դրամաշնորհային ծրագրի շրջանակում մնացորդը առ 01.01.2013թ.՝ 3 763.43 հազ.դրամ է, որից դրամարկղային ծախսը կազմել է 3 677.19 հազ. դրամ:
- «Արտասահմանյան պաշտոնական գործուղում» (01.01.03.04) ծրագրով սահմանված ծախսերի ֆինանսավորումն առ 01.01.2014թ. կազմել է 1 998.73 հազ. դրամ, որից դրամարկղային ծախսը կազմել է 1 984.51 հազ.դրամ:
- «Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելություն» (01.01.03.03) ծրագրով սահմանված ծախսերի ֆինանսավորումն առ 01.01.2014թ. կազմել է 419.65 հազ. դրամ: Ծրագիրն ամբողջությամբ կատարվել է: